ՇԱԲԱԹ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1881--№ 184

№184 - ՇԱԲԱԹ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1881

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տօն օրերից․
Տարեկան գինն է 10 ռուբլի․
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ․

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակէ եւ տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ․

Օտարքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

Խմբագրութեան ուղղած թէ՛ յօդուածները եւ թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցէով․ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները․ Խմբագրութիւնը իր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ․

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին $1\frac{1}{2}$ կոպէկ․
Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը եւ պ. Շահփիրզեանի [illegible]․
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով․

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔՍԱՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Առաջիկայ կիրակէ, ամսիս 13-ին, **ՍՈՒՐԲ ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ** կատարում է իր ուսումնարանի աշակերտուհեաց **ԵՕԹՆԵՐՈՐԴ** շրջանի պարգևաբաշխութեան հանդէսը: Նոյն օրը Մողնու եկեղեցում սուրբ պատարագից յետ դպրոցի վարչութիւնը կը կատարէ իր հանգուցեալ ուսուցիչների և բարերարների հոգեհանգիստ և այնուհետև ի ներկայութեան հրաւիրելոց պարգևաբաշխութեան հանդէսը ուսումնարանի դահլիճում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ․

Ազգային.—Պատասխան. — Թղթակցութիւն Թիֆլիզից․
Քաղաքական.—Քաղաքական լուրեր․
Մեղուի հեռագիր․
Մանր լուրեր․
Խառն լուրեր․
Յայտարարութիւններ․
Բանասիրական.—Կանոնադրութիւն «Հայոց բարեգործական ընկերութեան»․

ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆ

«Մշակի» ներկայ թուականի 161 համարում տպուած «Հետեւանքն ինչ կը լինի» առաջնորդող յօդուածին.

Դեռ եւս մեզ մոռացած չը լինի «մշակ-մեղուական» այն տարօրինակ բանակռիւը, որ ծագեց Ալեքսանդրապոլից հաղորդուած բողոքին կեղծ, միևնոյն միջոցին մի աննշան լուր առթիւ, որ տպուած էր «Մշակի» մէջ: Չը նայելով որ միևնոյն լրագրի մէջ հերքուեցաւ այդ լուրը, այնուամենայնիւ «Մշակը» լուսաւորչական *) հայերին անուանեց հալածող իրանց այլակրօն ցեղակիցներին: Պ. Ամիրխանեանցը, թէև վաղուց ցանկանում էր և է խորոց սրտի աշխատում հայերի մէջ դաւանակցութեան այդպիսի կռուախնձոր գլորել, բայց չէր յաջողվում: Այս անգամ իր նշանը հասաւ պ. Արծրունու յամառութիւնից ու համալութիւնից և մի քանի յանդուգն յարձակմունքներ տուաւ նոյն «Մշակի» մէջ, լուսաւորչական հայերին հալածող անուանելով («Մշակ» 1880 թ. № 98): Որպէսզի մենք թոյլ տանք իրան (Ամիրխանեանցին), որ իր քէֆովը մարդասիրութիւն անի, տեսէք ինչ է ասում «խղճի ազատութեան» քարոզող պ. փաստորը վերյիշեալ 98 համարում. «Մեր հայ ժողովրդի մէջ դեռ արծարծուած չէ կրօնի ազատութեան խնդիրը. շատերի մօտ դեռ շատ այլասէր գաղափարներ կան խղճի հետ շփոթուած այս մասին»: Սրանով չը բաւականացաւ պ. Ամիրխանեանցը և եկեղեցին ասպարէզ հրաւիրեց, որպէս զի «վէրք տայ (ում) և վէրք առնի» («Մշակ» 1880 թուական № 121):

Յայտնի բան է, այսպիսի բանավէճն աւելի ձեռնտու է և «որոնած չը գտածն է» Ամիրխանեանցի նման մարդասէրներին, քանի որ ազգութեան կրօնական միութիւնը, կամ նոյն է եկեղեցական միութիւնը, խզելով աշխատում են երկպառակութեան ազգավնաս սերմեր ցանել իրանց որսերի թիւը բազմացնելու, որպէս զի աւելի նիւթական օգուտներ ստանան այն ընկերութիւնից, որից վարձւած են: Այս ամեն գաղտնիքն արդէն պարզուեցաւ հայ մամուլի մէջ և տարակուսանքի առիթ չը մնաց: Ուստի մոռացութեան ենք տալիս այդ խնդրի անցեալը, քանի որ քաջ համոզուած ենք, որ հայութեան իսկական շահը ճանաչողի համար այսպիսի բանավէճը ոչ միայն ընդունայն է, և ժամանակի կորուստ, այլ մինչեւ անգամ ժամանակիս ա- [illegible] կամենում ենք նաև ցոյց տալ նորա ծանր միանգամայն վնասակար հետեւանքը, որոնք տեղի ունեցան մօտերումս մեր քաղաքի մէջ:

Նախ քան վերյիշեալ բանակռիւը մտք չէր կարծում, թէ մեր քաղաքում (Ալէքսանդրապօլ) գտնուէին բողոքական հայեր, իսկ եթէ կային էլ, հազիւ երեք անձինք լինէին, այն եւս խիստ ծածուկ: Երբ որ «Մշակն» սկսեց արդարութեան հակառակ լուսաւորչական հայերին յանդիմանել, ապտակել և մինչեւ անգամ նոցա կրօնն աղանդ անուանել, խոկոյն լոյս ընկան այստեղ մի քանի անձինք իրանց աւետարանական անուանող և սկսան բացարձակապէս բողոքականութիւն քարոզել և աղքատ, խեղճ ու տգէտ մարդիկներին դէպի իրանց գրաւել: Ահա մօտենում է տարին, որ դոքա համարձակապէս քարոզութիւններ են անում և մարդիկ որսում: Դոցա թիւն այժմ մօտ 20-ի է հասնում: Կան այնպիսիները, որոնք ընդունելով այդ կրօնը, սկսում են բռնանալ իրանց ընտանիքի վերայ, և բռնութեամբ իրանց կրօնն ընդունել տալիս: Գիտենք այնպիսի մի մոլեռանդ, որ իր կնոջն այդ մասին այնքան է ծեծել գլխին վերհասել, որ այժմ երկու աչքով կոյր է նա: Գիտենք և այնպիսին, որ տան մի քանի անդամները մերժելու համար նորա նոր հաւատը, ամեն օր ծե-

---

*) Մեր համոզմունքին ընդդէմ է անուանել «լուսաւորչական հայեր», քանի որ հայ ասելով իմացվում է լուսաւորչական կրօնին վերաբերող: Միւս կրօնապէս անջատուած հայերին է վայել հայ բառի հետ կցել կաթոլիկ կամ բողոքական և այլն ածականները և ոչ թէ մեզ, քանի որ նոքա մեզանից են վիժուած. Հ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ․

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ․

—

Ընկերութեան նպատակը․

§ 1. Ընկերութեան նպատակն է նպաստել լուսաւորութեան տարածմանը Հայերի մէջ Կովկասում և Անդրկովկասում և օգնել նոցա նիւթականապէս․

§ 2. Այս նպատակին հասնելու համար Ընկերութիւնը, ըստ իւր ոյժերի զարգացման՝

ա) պահպանում է արդէն գոյութիւն ունեցող Հայոց ուսումնարանները և նիւթականապէս նպաստում է նորերը հիմնուելուն.

բ) օժանդակում է ժողովրդի մէջ արհեստների տարածմանը.

գ) օգնում է ուսանողներին իւրեանց ուսման ասպարէզի մէջ.

դ) լոյս է ընծայում գրքեր և պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար, նոյնպէս և այլ գրականական երկասիրութիւններ.

ե) հիմնարկում է տպարաններ, վիմագրատներ և ընթերցարաններ.

զ) հիմնարկում է հիւանդանոցներ և այլ բարեգործական հաստատութիւններ.

է) օգնում է տառապեալներին ժողովրդական թշուառութիւնների ժամանակ, որպիսիք են՝ սով, տարափոխիկ ախտ, հրդեհ և այլն․ Այսպիսի դէպքերում, ըստ պահանջման հարկի, կազմում է առողջապահական մասնախմբեր կամ ուղարկում է իւր կողմից հաւատարմատարներ.

ը) իւրաւունք ունի կարևոր դէպքերում նպաստել և այլ ազգօգուտ ընկերութիւններին․

Ծանօթ. Վերյիշեալ այն կէտերի վերաբերմամբ, որոնց մասին օրէնքով պահանջվում է կանխապէս ունենալ պատշաճաւոր իշխանութեան թոյլտւութիւնը, Ընկերութիւնը սկսում է իրագործել իւր ձեռնարկութիւնները այդ թոյլտւութիւնն ստանալուց յետոյ․

—

Ընկերութեան միջոցները.

§ 3. Ընկերութեան միջոցները կազմում են՝

ա) անդամների տարեկան վճարները.

բ) միանուագ նուէրներ դրամով, իրեղէններով և ամենատեսակ ստացուածքով.

գ) գումարներ, որոնք գոյանում են հրապարակական դասախօսութիւններից, երաժշտական հանդէսներից և այլն, ըստ օրինակի այլ ընկերութեանց, նոյնպէս և գրքերի, պարբերական հրատարակութիւնների և՛ առհասարակ ամենատեսակ ստացուածքների վաճառումից Ընկերութեան որոշման համաձայն։

—

Ընկերութեան իրաւունքները՝

§ 4. Ընկերութիւնը իւր գործունէութիւնը ընդլայնելու համար վայելում է ամեն կառավարչական հաստատութիւնների և անձանց օրինաւոր աջակցութիւնը․

§ 5. Ընկերութիւնը կարող է ունենալ հանգանակութեան տուփեր եկեղեցիների մէջ Հայոց հոգևոր իշխանութեան համաձայնութեամբ․

§ 6. Ընկերութիւնն ունի առանձին կնիք և դրոշմ այս վերնագրով՝ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ․

§ 7. Ընկերութիւնը կարևոր դէպքերում իրաւունք ունի լրացնել կամ փոփոխել սոյն այս կանոնադրութիւնը պատշաճաւոր իշխանութեան թոյլտւութեամբ․

—

Ընկերութեան կազմակերպութիւնը.

§ 8. Ընկերութիւնը կազմում են՝

ա) պատուաւոր,

բ) մշտական և

գ) գործադիր անդամները․

Այս կոչումները կրում են երկու սեռի անձինք ևս․ Անդամների թիւը սահմանափակած չէ․

§ 9. Պատուաւոր անդամները կարող են ընտրուել Ընկերութեան առանձին ծառայութիւններ ցոյց տուող անձինք․ Այդ ընտրութիւնը կատարում է Ընկերութեան ընդհանուր ժողովը Խորհրդի առաջարկութեամբ․

§ 10. Մշտական անդամներ համարվում են Ընկերութեանը միանուագ ոչ պակաս քան երեք հարիւր ռուբլի նուիրող անձինք․

§ 11. Գործադիր անդամի կոչումն կրում են տարեկան հինգ ռուբլի վճարողները․

§ 12. Պատուաւոր անդամներին տրվում է Ընկերութիւնից պատշաճաւորապէս ստորագրուած և կնքով դրոշմած վկայաթղթեր․

§ 13. Բոլոր անդամները, ինչ կոչման և լինին, ունին ձայնի իրաւունք ընդհանուր ժողովների մէջ, ուր և կայանան այդ ժողովները, եթէ միայն անձամբ ներկայ են այնտեղ․

§ 14. Ընկերութեան անդամները հատուցանում են իւրեանց վճարը նոյն իսկ անդամ գրուելիս․ Տարեկան և միանուագ վճարների ընդունելու եղանակը որոշուած է 28-դ §-ում․

§ 15. Այն անդամները, որոնք չորս ամսուայ ընթացքում չեն հատուցել իւրեանց տարեկան վճարը, հրաժարուած են համարվում և կրկին ընդունվում են, երբ վերստին նորոգում են նոյն վճարը․

—

Ընկերութեան վարչութիւնը.

§ 16. Ընկերութեան գործերը վարում են՝ Ընկերութեան Խորհուրդը և տեղական վարչութիւնները․ Խորհուրդը գտնվում է Տփխիսում, իսկ տեղական վարչութիւնները Կովկասի և Անդրկովկասի այլ քաղաքներում և տեղերում, ուր այդ հնարաւոր կը լինի և Խորհուրդն օգտաւէտ կը համարէ (§ 18).

§ 17. Բացի նախընթաց 16-դ §-ի մէջ նշանակուած Խորհուրդը և տեղական վարչութիւնները, Ընկերութեան յաջողակ զարգացման համար՝ նորա գործունէութեան զանազան ճիւղերի մէջ, կազմվում են տեղական մասնաժողովներ սակաւաբնակ տեղերում և ուր անկարելի է բանալ տեղական վարչութիւն․

§ 18. Տեղական վարչութիւնները կազմվում են՝ երբ երկու սեռի ամենատեսակ անդամների թիւը 15-ի է հասնում և երբ իւրեանց գործողութիւններն սկսելու համար Խորհրդից թոյլտւութիւն են ստանում․ Իսկ տեղական մասնաժողովները բացվում են, որքան անգամ և ունենան, երբ տեղական վարչութիւնների միջնորդութեամբ այդ մասին իրաւունք են ստանում Խորհրդից․ Ուր որ տեղական վարչութիւն չը կայ, Խորհրդի համաձայնութիւնը կարելի է ստանալ անմիջապէս․

§ 19. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները՝ առանձնապէս Խորհրդից իւրեանց գործողութիւնն սկսելու թոյլծի և հողածանքի են ենթարկուել: Եթէ հարկ լինի՝ դոցա անունները կարող ենք յայտնել:

Այսպէս ամենց փողով, ծեծով, բռնութեամբ և ողէմներին էլ համեմատ հետզհետէ աշխատում էին իրանց փոքրիկ հօտը մեծացնել: Մինչև անգամ մի յարմարաւոր տուն էլ իրանց ժողովարան վարձեցին և ամենայն կիւրակի ժողովելով այնտեղ՝ աղօթում էին: Այս երևոյթը նկատելով մի քանի հայ երիտասարդներ՝ շարունակ յաճախեցին այնտեղ, որտեղից բաշ «Մշակի» կարծեաց համաձայն նոցա, որ կրկին իրանց եկեղեցին վերադառնան: Այդ ձանապարհն աւելի առիթ ու առիք տուեց նոցա իրանց ժողովարանը հրաւիրել դպրոցի աշակերտներ, մանուկներ և այնպիսի անձինք, որոնք իրանց գործին ձեռնտու էին: Երբ որ մանուկների ծնողները լսեցին դոցա այդ արարքը, իսկոյն մի քանիսը դիմեցին ժողովարանը և յայտնեցին, որ միւս անգամ չը համարձակուին այդպիսի օրինաց հակառակ գործեր անել: Այս բանին ամենևին ուշադրութիւն չը դարձրին հայ-բողոքականները, այլ ընդհակառակն աւելի և աւելի աշխատում էին մանուկ սրտեր գողանալ: Օգոստոսի 16-ին, Աստուածածնի կիւրակի առաւօտեան վերյիշեալ հայ երիտասարդներից մէկը երբ ժողովարանն է մտնում՝ ժամի 10-ին, տեսնում է, որ [illegible] բողոքական հայ քարոզ է կարդում այդտեղ հրապարակաւ և իր քարոզի մէջ սկսում է աջ և ձախ Հայաստանեայց սուրբ եկեղեցու վրայ յարձակուել, նորան կռապաշտական եկեղեցի անուանելով: Այդ խօսքերը իր կրօնական համոզմունքին խիստ վիրաւորական համարելով՝ սկսում է դորա հետ վիճել: Օտարականը տեսնելով իր անխոհեմ վարմունքը՝ իսկոյն հեռանում է ժողովարանից և նորա փոխանակ սկսում է մի այլ բողոքական, որ քահանայի որդի է, նա վիճել: Վիճաբանութեան ժամանակ, խիստ տաքացած բողոքականը մեր եկեղեցուն կռատուն է անուանում, իսկ նորանում գտնուած նուիրական սրբութիւնները՝ կուռք: Երբ հայ երիտասարդը կաթուղիկոսի և այլ մարմնաւոր իշխանութեան պատկերներն ապացոյց է բերում, որպէս հերքումն նորա ասածների՝ նոյն և միևնոյն անունն է տալիս: Այս բանը խիստ և ի խոր խոցոտում է երիտասարդի սիրտը, իսկոյն բռնում է բողոքականի արխալուղի օձիքից և հրաւիրում դատաստանատուն: Բողոքականները տեսնելով այդ խռովութիւնը՝ խլում են երիտասարդի ձեռքից հայհոյիչը և փախցնում: Իսկոյն երիտասարդը դիմում է ոստիկանատուն և յայտնում բոլոր անցքը և որի մասին գրւում է արձանագրութիւն: Այս անցքի մանրամասնութիւնն լսելով հայերը, նոցանից մի քանիսը դիմում են ժողովարանը, բայց արդէն ուշ էր, որովհետև բոլորն էլ ցրուած էին լինում: Հետզհետէ ամբոխը ժողովելով գնում է աւետարանականների մէկի տուն, որ արդէն կոխակել փախել էր: Ամբոխից մի քանի մանուկներ 12—14 տարեկան հասակի, կոտրում են դուռը ու ներս լցվում: Տանը մարդ չը գտնելով սկսում են տան մի քանի կարասիքները կոտրատել: Այդ միջոցին գալիս է մի ոստիկան, ցրվում է ամբոխը և մանուկների վերայ արձանագրութիւն կազմում: Ժողովրդի այս կատաղի հալածանքը տեսնելով բռնութեամբ այդ կրօն ընդունող կանանցից մի քանիսը՝ բացարձակ յայտնում են, որ նոցա բռնութեամբ են այդ կրօնը ընդունել տուել: Այս խռովութիւնն աւելի վառում է ամբոխի կատաղութիւնը և այսպէս մի քանի օր իրար վրայ յաջորդաբար հալածանքներ են շարունակվում: Հայրը՝ որդուն, որդին՝ հօրը, մարդը՝ կնոջը, կինը՝ մարդուն, եղբայրը՝ եղբօրը, քոյրը՝ եղբօրը հալածում են տանից և այսպէս երկպառակութեան մէջ է մեր քաղաքը:

Վերջացնելով մեր նամակը, խորհուրդ կը տանք «Մշակի» մեծապ. խմբագրին, որ ուշի ուշով կարդայ մեր այս նամակը, որ բոլորովին հեռի է բանասարկուական ներշնչութիւնից և բոլորովին կատարուած իրողութիւնն է, որ հաղորդեցինք, իսկ հակառակ դէպքում մենք կարող ենք մեր ասածները հաստատելու համար դատաստանական արձանագրութիւններից և եղած դատերը քաղել գործի էութիւնը: Յոյս ունինք, որ այսուհետև կը համոզուի Պ. Արծրունին և առիթ չի տայ Ամերիկանեաններին իզուր երկպառակութիւն սերմանել մեր ազգային միութեան մէջ: Չիմա իմացա՞ք, պ. Արծրունի, «հետևանքն ինչ կը լինի»:

Պետրոս Հովհաննեան

Ալէքսանդրապոլ, 1-ին սեպտեմբերի

ԳԱՂԹԱԾԻ ԱՂԱՑ

Ձիս գիտէր, յուլիսի քանիսին էր, Գիլիջանից ձիաւորեան ընկայ Թափա, Թանջարայ, պլինձ, պղնձկալ, սիթիլ, կուռւկ մուշուբայ ու դանա [illegible] թափընելով, օգոստոսի 1-ին մտայ Թիֆլիզ: Թիֆլիզ: Մութը կոխիր էր: Երկինքը անքան աստղ չը կար, ինչքան Թիֆլիզ կրակ ու ճրագ կ'երևնար կը: Ղալմաղալ, ճչոց, բոռոց, դոռդռոց, շխկտոց, վժվժոց . . . ալ վե՞ր մէկը ըսիմ; վե՞րը հեքեաթ ընիմ. շաշվիր, աչքերս պաղիր, բերանս բաց կայնիր մնացիր էի. չորս թարափին ձէն էր, որ կուգար: «Պա՛, պա՛ պա՛…»շըրը՛խկ, թըրը՛խկ… դարտակ կշեռքը բարձրցնէր կը հարիֆին մէկը, «կարկի սխայր», որի գիրվանքայ էրգի շահ՛ւր. հա՛յ լաւ մօթալ, կ՛մարի…»: Ջանիմ, ալ ինչ յերկնցնիմ, անպէս պըժլտայմ էին ցկլի բախալներու շարուն օր, խամ մարդը գիտէ թէ աշխարհս սոնն է: Չեռացայ ասանկից ու գաղէթածի սղայիս տունը հարցնելով, մէկ ալ օրը էկայ հրամանքիդ դուռ: Շնորհակալ եմ, նստեցուցիր, հալս, քէֆս հարցուցիր, էփէյի վախտ անցուցիր, հմը ինչ մեղքըս թաղցնիմ, տա սհաթին շուքը անպէս էր սևմիր օր, ձենձս հանէր կը, քրտինքս պձղըներիս կաթէր կը, դուզէլ խօսիլ, հմը գիտես թէ բերնիս խուբ դընէին կը, բօղզիս ծակը կալնէին կը, խելքս կերթար կը, վա՛յ նաչարի խօսէի կը: Ատ սհաթին աչքս վանքարից ցած ցկեցի, օր ինչ, յանուէր գաշները քու մէջ լողանան կը, սըկին, գեղլին, թապըլտին կը, քէֆ կէնէին: Հազար հեղ մաքիս մէջը էրնէկ ավեցի ատ գաշներին: Նանի օր ձեռքէս գար, գաշը կը դառնայի ու վանքարից ցած կընկնէի կը ջըի մէջ, անքան օր ջանիս հասիր էր: Ջանիմ շատ ու քիչ շաք տեսիր էի, հմը ասպէս Աստուծու բեբեկական կըրակ հէչ չէի տեսիր, քիչ մնաց օր Ղալայէի Մարգարին սաղ սաղ քեաբաբ չինէր:

Ինչպէս վարավուրդ կէնիմ, նագուկները, թառլանները, գիտուկները, դանկին ապաները, խանում ապաները, քալբադօնները շուքի ձեռից փախիր էն կօճօր, եա ուրիշ տարին տեղեր ու իրենց հմար քէֆլամիշ գլլին կը: Ինձի պէս աղքատ սանխաթքեարները, Փալըր Փուխարաները, դրսէն պլպլացող, ներսէն դարտակները ու ղափուղօնները մընայիր էն ատեղ ու տապկվէն կը շուքին ձեռքը, սուրութմիշ գլլին կը բուլվարին տախտակներուն վրայ: Մէկը կըսէ, մեկ ինի գիմացի բանցր սարի գլխին նստած յըլլէի, մէկալը՝ մեկ Փլան տաղ՝ աղբուրը խաւից յըլլէր:

Ես ալ էփէյի ամառ չամառ Թափ իմ էրիր, հմը իսի անիծած շուքը մաճալ չի տայ թէ բաշլայիմ եավաշ եավաշ դալայիր: Անպէս վարավուրդ կէնիմ օր Թափ էրածս ամները բէթուն ատեղ չիմ կրնայ դալայի, կէան ալ հեռու կը տանիմ մեր քաղաքը, ամեղ լաւ ուդածիս պէս կը դալայիմ, կը գրկիմ հրամանքիդ, գուն ալ տէրվէշէր կէնիսկը: Ասեղ սրանից չիմ կրնայ դալայի, չունքի ձեր քաղքին խաւաթը գլուխ չիմ տանիր, վախվխելէն սիրտի սրտրիմ օր չը ծակվի, հմը մեր քաղաքը օր անիմ, ջուղդ յայով մըտնիմ կը պղնձի մէջ ու ինքան ուզիմ տորիմ կը, թող ծակվողը ծակվի, կոտրողը կոտրի, ծռվողը ծռվի: Քանի ատեղ եմ, անպէս ամէնր սիրտի դալայիմ օր, գլուխս գլխմադալի տակ չը ցկիմ:

Գաղէթածի աղա, հիմի հրամանքիդ խնդրիմ կը, օր, գաղէթիդ մէջը տալիս թէ՝ գիմրեցի Ղալայի Մարգարը էկիր է Թիֆլիզ, Դարչօյի դուքնի գէմը, կօնսխտորի կշտին, դուքեան է բացիր ու ինչ թաւլըր ամանն բոխս դալայէ կը, ու հէչ փարամ ալ հախ չի առնիր, մէ՛կ օր դուզէ, թող տանի:—Աս յիմացում տալն ալ ըշտայ ադատ է, թէ չէ, ինձի հմար ամանն է պահաս: Անքան օր շուքերը անցան, մէմալ տեսար, մէշօրս շըլկեցի ու ընկայ փարժաները, ժամերը, ալէյները, խանթըները, տըները, խաները, բաղերը մահլէստանը…անքան ամառ թափ կէնիմ օր էրկու տարի դալայիմ, յաղը չը գայ: Աշխարս ադքան:

Հրամանիդ խ. ծ.:

Ղազար Մուրէր

Թիֆլիզ 22-ին օգոստոսի

տուութիւնը, հաղորդում են այդ մասին տեղական իշխանութեանը:

§ 20. Ընկերութեան վարչութիւնների բոլոր անդամները, թէ Տփխիսում և թէ Տփխիսից դուրս, ձրի են կատարում իւրեանց պարտաւորութիւնները բացի այն դէպքերից, որոնք Ընկերութեան խորհուրդը վարձատրութեան արժանի կը գտնէ:

§ 21. Ընկերութեան բոլոր գործիչների պարտաւորութիւնն է՝ զարգացնել նորա գործունէութիւնը, աճեցնել նորա միջոցները և որքան հնարաւոր է խնայողութիւն պահպանել, զգուշանալով աւելորդ ծախքերից: Այս գործիչների կազմակերպութիւնը և նորանց պարտաւորութիւնների շրջանը բացատրուած է հետևեալ §§-ներում:

—

Ընկերութեան խորհուրդը.

§ 22. Խորհուրդը վարում է Ընկերութեան բոլոր գործերը:

§ 23. Խորհուրդը կազմվում է Տփխիսի ընդհանուր ժողովից ընտրուած ինն անդամներից և հինգ փոխ-անդամներից: Այդ ինն անդամները ընտրում են իւրեանց միջից նախագահ և փոխ-նախագահ, որը վարելու է առաջինի պաշտօնը՝ նորա բացակայութեան ժամանակ:

§ 24. Խորհուրդը իւր պատասխանատուութեան ներքոյ ընտրում է իւր միջից կամ Ընկերութեան միւս անդամներից մի քարտուղար և մի գանձապահ:

§ 25. Խորհրդի նախագահը և անդամները ընտրվում են երկու տարով: Ամեն տարուայ վերջում խորհրդի անդամների կէսը թողնում է իւր պաշտօնը հերթով, իսկ նոցա տեղերը բռնում են նոր ընտրվածները, որոնք կարող են լինել և դուրս գնացողներից:

Ծանօթ. Այս կանոնադրութեան գործադրութեան օրից մի տարի յետոյ՝ խորհրդի անդամների կէսը հեռանում է վիճակով:

§ 26. Խորհուրդն, իբրև Ընկերութեան կենդրոնական հիմնարկութիւն, ղեկավարում է նորա բոլոր գործողութիւնները դէպի պատշաճաւոր միութիւն, համապատասխան նորա գոյութեան նպատակին:

§ 27. Խորհուրդը կենդրոնացնում է իւր մէջ տեղական վարչութիւնների և մասնաժողովների կայքի, դրամագլուխների և այլ միջոցների վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները և կարգադրում է այդ միջոցները իւր նախահաշուին կամ ընդհանուր ժողովի վճիռներին համաձայն:

§ 28. Խորհուրդը ընդունում է անդամների վճարները և դրամական նուէրները, մուծանելով այդ առանձին մատեանների մէջ և տալով նորանից կտրած անդորրագրեր գանձապահի ստորագրութեամբ:

§ 29. Խորհրդարանը, տեղական վարչութիւնները և տեղական մասնաժողովները մտնող գումարները, ըստ իւրեանց նշանակութեան, բաժանվում են երեք տեսակի՝

ա) Ծախսուց գումարներ, որոնք Ընկերութեան ընթացիկ ծախքերի համար են որոշուած:

բ) Անձեռնմխելի գումար, որը կազմելու համար պահվում է ամենայն տարի Ընկերութեան եկամուտներից հինգ տոկոս, հանելով կանխապէս ընթացիկ ծախքերը:

գ) Յատուկ գումարներ, որոնք նուիրողի կողմից մի առանձին որոշ նպատակի են յատկացրած:

Ծանօթ. Յատուկ գումարները, որոնք առանձին նպատակների են յատկացրած, կարող են ծախսուել միայն այն ժամանակ, երբ նորանցով միանգամայն ապահովվում են նուիրատուներից նախագըծուած գործադրութիւնները: Հակառակ դէպքում այդ գումարները անձեռնմխելի են պահվում, մինչև որ կազմուին բաւարար և նպատակները ամբողջապէս ապահովացնող միջոցներ: Յատուկ գումարները խորհրդի հաշուի մէջ միւս գումարներից առանձին են նշանակվում:

§ 30. Իւրաքանչիւր տարուայ վերջին խորհուրդը կազմում է նախահաշիւ Ընկերութեան յաջորդ տարուայ ծախուց համար և այդ նախահաշիւը առաջարկում է Տփխիսում ընդհանուր ժողովի հաստատութեանը ց15-ն Դեկտեմբերի (§ 44):

§ 31. Խորհրդարանը մտնող գումարները տրվում են պետական կամ մասնաւոր բանկեր ցպահանջուածն կամ ընթացիկ հաշուում, նայելով թէ որն է աւելի օգտաւէտ և աշխատելով որքան կարելի է խորհրդարանում պահել ոչ աւելի քան հինգ հարիւր ռուբլի:

§ 32. Խորհուրդն ունի իրաւունք՝

ա) իւրեան տուած իշխանութեան սահմանների մէջ կապել ամենատեսակ պայմաններ և զղաչինքներ:

և բ) դատ բանալ՝ ուր հարկն է, Ընկերութեան գործերի վերաբերութեամբ և պաշտպանել նորա շահերը իւր հաւատարմատարների ձեռքով, որի համար և տալ նոցա իւր կողմից առանձին հաւատարմաթղթեր:

§ 33. Ընկերութեան գործերի վերաբերութեամբ խորհուրդը հաղորդակցում է բոլոր կառավարչական և հասարակական հիմնարկութիւնների հետ:

§ 34. Խորհրդի պարապմունքներն անընդհատ են, իսկ նորա նիստերի օրերը որոշվում են ըստ պահանջման հարկի:

§ 35. Որպէս զի խորհրդի վճիռներն օրինաւոր համարուին, անհրաժեշտ է ոչ պակաս քան հինգ անդամների ներկայութիւնը. սոցա թւումն է և նախագահը կամ փոխ-նախագահը: Այս անդամների ոչ և իցէ մէկի բացակայութեան դէպքում, նախագահը հրաւիրում է փոխ-անդամներին հերթով:

§ 36. Վճիռները կայանում են ձայների առաւելութեամբ, որոնց հաւասարութեան դէպքում նախագահի կամ նորա փոխանորդի ձայնը տալիս է առաւելութիւն: Այդ վճիռները գործադրվում են նախագահի ստորագրութեամբ և քարտուղարի վաւերացմամբ:

§ 37. Ընկերութեան գործերին վերաբերեալ բոլոր արձանագրութիւնները և պայմանագրերը, նոյնպէս գումարների պահանջումը փոխատու հիմնարկութիւններից և առհասարակ այն տեղերից, որոնց յանձնուած է Ընկերութեան դրամագլխի պահպանութիւնը, նմանապէս և Ընկերութեան պատկանեալ գումարների փոխադրութիւնը պէտք է ստորագրեն նախագահը և խորհրդի երկու անդամները քարտուղարի վաւերացմամբ:

§ 38. Տեղական վարչութիւնների և մասնաժողովների համար իբրև ձեռնարկ խորհուրդը կազմում է սոյն այս կանոնադրութեան սահմաններից դուրս չը գալով, առանձին հրահանգներ (§ 48), որոնք պէտք է ենթարկուին ընդհանուր ժողովի վերահայեցողութեանը և հաստատութեանը:

§ 39. Խորհուրդը որոշում է իւր գործակալութեան եղանակը: Նա բաժանում է պարապմունքները անդամների մէջ, իսկ մասնագիտական հարցերը վճռելու համար ընտրում է առանձին յանձնաժողովներ Ընկերութեան անդամներից կամ հրաւիրում է այլ մասնագէտներ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Բէրլինի «Provinzial-Correspondenz» թերթը Դանցիգում տեղի ունեցած տեսակցութեան մասին ասում է.—Աւստրիական կայսրը հոգեկան միութեան մէջն էր գտնւում ռուսական և գերմանական կայսրների հետ։ Վերջին տասը տարւայ խաղաղութեան պահպանելու համար Եւրոպան պարտական է երեք հիւսիսային կայսրութիւնների մէջ կայացած համաձայնութեանը։ Սրանից յետոյ և այդ համաձայնութիւնը չի խանգարւիլ, և կը տայ ազգերին այն վստահութիւնը և հանգստութիւնը, որոնք թոյլ կը տան նրանց իրենց բոլոր ոյժերը նուիրելու խաղաղ աշխատանքին և պետութեան ներքին խնդիրների առողջ զարգացմանը։ Եթէ ընդհանրապէս կարիք կար այդպիսի մի հաւատացումն՝ Դանցիգեան տեսութիւնը բացել է դէպի այդ՝ ուղղութիւնը ամենալաւ ճանապարհը.

* * *

«Times» անգլիական թերթին հեռագրում են Պօլսից, որ պաշտօնեաների խորհուրդը որոշել է օգոստոսի 31-ին ուղարկել Եգիպտոս կայսերական գործակատար այնտեղ վերջին ժամանակ պատահած ցոյցերի պատճառները քննելու համար։

* * *

Ինչպէս ասում են մի քանի լրագիրներ, Ալժիրիայի ընդհանուր նահանգապետ պ. Ալբէրտ Գրէվին այլևս Ալժիրիա չի վերադառնալ։ Ինչպէս ասում են, նրա պաշտօնը առաջարկել են գէնէրալ Շանզիին (այժմ ֆրանսիական դեսպանապետ Պետերբուրգում), բայց սա իբրև թէ մերժել է։

* * *

«Daily News» անգլիական թերթի թղթակիցը գրում է Թունիսից, որ գէնէրալ Լօժէրօն յայտնել է, թէ էլի 20,000 զօրք չեն ուղարկիլ իրեն, նա իր հրաժարականը կը տայ։

* * *

Աւստրիական դիւանագիտութիւնը յանձնել է գերմանական արտաքին գործերի պաշտօնէութեանը իւր կառավարութեան ծանուցումը, որի մէջ ուրախութիւն է յայտնում Դանցիգում կայսրների տեսութեան առթիւ։

* * *

Գերմանիայում անդրլեռնական կենդրոնը հրատարակել է իւր ընտրութեան հրաւէրը, որի մէջ պարզած են հետևեալ պահանջները. դարձ դէպի քրիստոնէական հաւատը կրթութեան, դաստիարակութեան, գիտութեան, օրէնսդրութեան և ամեն հասարակական կեանքի մէջ. եկեղեցու անպայման ազատութիւն. այն օրէնքների փոփոխումն, որոնք եկեղեցու իրաւունքները սահմանափակում են. կօնգրէգացիաների վերականգնումը. քաղաքական և ընկերական կարգեր, հիմնած սահմանադրական իրաւունքների և արտօնութիւնների յարգելու և գործադրութեան վերայ. գերմանական կայսրութեան դաշնակցական սահմանադրութեան յարգելը. շտապեցնել իրագործելու տնտեսական վերանորոգութիւնները, որոնք կենդրոնի համաձայնութեամբ և նրա աջակցութեամբ պիտի տեղի ունենան ազգային աշխատանքի, գերմանական բանւորների և գործատէրերի օգտին. թեթևացնել ուղղակի հարկերը. պակասեցնել կայսերական գանձարանը մտնող այն մասնաւոր տուրքերը, որոնք հաւաքւում են դաշնակցութեան առանձին պետութիւններից, բայց ոչ նոր հարկերի օգնութեամբ, այլ խնայողութեան միջոցով, և այդ պէտք է լինի պատերազմական հաշուեցուցակում, որը աւելացրած է, չը նայելով կենդրոնի յայտնած բողոքին։ Այս հրաւէրի տակ ստորագրել են տասը հոգի, այդ կուսակցութեան գլխաւորները. Հրաւէրը վերջանում է հետևեալ նշանաբանով. «Աստուծու օգնութեամբ ճշմարտութեան, իրաւունքի և ազատութեան համար»։

* * *

Ալէքօ-փաշան հաղորդեց մշտական մասնաժողովին իւր վճիռը, որ այժմէն (27-ին օգոստոսի) բոլոր վաշտերի հրամանատարները տեղական զօրքերումը կը նշանակուին բացառապէս տեղական սպաներ։ Յայտնի է, որ այդ ռումէլական տեղական զօրքումը ընդունուեցան բազմաթիւ ռուս սպաներ, որոնք ծանօթ չը լինելով բուլղարական լեզուի և տեղական սովորութիւնների հետ, շատ անգամ անկարող են կատարելու, ինչպէս հարկն է, իրենց պարտաւորութիւնները։ Մշտական մասնաժողովը այդ որոշումն իւր հաւանութիւնը տուաւ։ Մի քանի ժամանակ է, որ Ռումէլիա են եկել բազմաթիւ ազատամիտ բուլղարացիներ, որոնք Բուլղարիայում չեն կարողանում մնալ։

ՄԵՂՈՒԻ ՀԵՌԱԳԻՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ).

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԻՐԺԱ

4-ին սեպտեմբերի.

Արք. բանկ. 1-ին . . .	96	62
— — 2-րդ . . .	94	—
— — 3-րդ . . .	94	75
— — 4-րդ . . .	93	75
Վիճակահ. 1-ին . . .	226	50
— — 2-րդ . . .	220	50
Արև. փոխառ. 1-ին	91	25
» » 2-րդ	90	25
» » 3-րդ	91	25
Լօնդօն	25	81
Համբուրգ	220	50
Փարիզ	272	25
Ոսկի	7ռ.	66 կ.

Բիրժայի վիճակը թոյլ է.

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՓԱՐԲԻՑ մեզ գրում են.—Այս տեղում մի գեղանի մանկամարդ նորահարսն 18 ամեայ հասակի մի համեստ ընտանիքից Կարբի գիւղից ամուսնացած է Օհաննէս Պօղոսեանի հետ. Նոյն փարբի գիւղից Տ. Մատ. տափական ախտով վարակուած աշխատում է խախտել ամուսնական սուրբ ուխտը և ձեռք բերել նորա սէրը։ Բայց երբ ամենայն հնար և միջոց գործ դնելով չէ կարողանում իւր նպատակին հասնել, այն ժամանակ մոլեգնեալ սիրահարը միջոց է փնտռում գէթ բռնի հասնել իւր նպատակին։ Եւ այսպէս դարանի մտնելով նոցա այգիում, երբ օգոստոս 15-ի գիշերը գեղեցիկ Մարգարիտը (այսպէս է անուանվում նա) այգիում մոռացած ճերմակեղէնները փնտռելու էր գնացած լուսնական լուսով, այդ պատեհ ժամը ձեռքից չը թողնելով Մատ...ը իւր ընկերակից աչառակիցի Ա. Գ.-ի հետ յարձակւում են անպաշտպան կնոջ վերայ և ցանկանում են բռնի բռնաբարել, և նա չը նայելով իւր կանացի տկարութեանը՝ մի ժամից աւելի արիաբար մաքառում կռւում է այդ մոլեգնեալ գազանների հետ, այնպէս որ բոլոր չորերը պատառոտւում է, հարիւրաւոր տեղ դաշոյնի հարուածներով ծակծկում են նորա քնքոյշ մարմինը, սակայն աղջկանութեան արի զինուորը անձնատուր չէ լինում, մինչև որ կատաղի մոլեգնութեան հասած սուրը կտրում է նորա պարանոցի շնչափողը, ուր արեան ճապաղների մէջ փչում է իւր հրեշտակային հոգին։

Այս սոսկալի անցքից երկու ժամ յետոյ սիրող ամուսինը և ծերունի սկեսայրը փնտռելով գտնում են իւրեանց արի նահատակի անշնչացած մարմինը և դառն կոծով ողբում են նորա վերայ... Հազիւ երկու օրից գաւառական բժիշկը և հաշտարար ատենի քննիչը նոյն տեղում քննում արձանագրում են այս անբաղդ անցքի մանրամասնութիւնները և երեք օրից յետոյ առանց քահանայի օրհնութեան և ալէլուիայի թաղւում է գիւղի հանգստարանում, յաւիտենական ամօթի դրոշմը դնելով իւր հոգևոր հովւի ճակատին, ընդ նմին անթառամ ծաղկանց պսակ հիւսելով ամուսնական սիրոյն հաւատարիմ մնացած պարկեշտասուն հայ կանանց անմահ շիրիմներին։

Տեսնենք օրէնք և արդարութիւնը որպիսի դատաստանով կը դատէ եղեռնագործ դատապարտեալներին, և ինչով կը մխիթարուին նոյն գիւղի հասարակութիւնը, և նոցա մերձաւոր բարեկամները իւրեանց սիրելիին անփոխարինելի կորուստի վերայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկացիները և անգլիացիները առհասարակ մի տեսակ սէր ունին դէպի հազուագիւտ բաները։ Նորերումս բաւական խօսակցութեանց առարկայ դարձաւ Գարֆիլդի մի ոսկրի գողութիւնը։ Գարֆիլդի վերայ բժշկական գործողութիւններ կատարելիս վէրքի թարախի հետ միասին դուրս են եկել և ոսկրների մի քանի կտորներ, որոնք իբրև պատմական և բժշկական նշանակութիւն ունեցող իրեր թանգարանին յանձնվեցաւ պահելու համար։ Բայց այժմ այդ ոսկրները կորել են։ Կարծում են, որ գողը միմիայն միակ ցանկութիւն է ունեցել նախագահի վէրքի յիշատակը ունենալ։

—Պակաս հետաքրքիր չէ և մի ուրիշ ամերիկացու գործը։ Նախագահ Գարֆիլդը մեծ համբերութեամբ տանում էր բժշկական ամեն մի գործողութիւն, բայց նրա գործունեայ բնաւորութիւնը աշխատանք էր ուզում։ Երբ նա մի փոքր կազդուրվեցաւ, նրան ներկայացրին մի գործ և թուղթը պիտի ստորագրէր։ Լրագիրները շատ ուրախանում էին այս բանի վերայ նրա ուղղվելը նկատելով դրա մէջ։ Բայց շուտով նախագահը կրկին վատ դրութեան մէջ ընկաւ։ Մի հարուստ ամերիկացի ցանկացաւ, ինչ որ էլ լինէր, վիրաւորուած նախագահի իսկական ստորագրութիւնը ձեռք բերել։ Երբ թղթերը նայեցին, երևեցաւ որ ստորագրած թուղթը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Գարֆիլդի ծառայողներից մէկի պսակի հրամանը։ Միլիօնատէրը փեսայի մօտ գնաց, բայց սա հրաժարվեցաւ այդ թուղթը ծախել, առանց որի նա չէր կարող իր հարսին բեմին մօտեցնել պսակվելու համար։ Ինչքան խնդրեց հարուստը, փեսան չէր տալիս։ Մի փոքր մտածելից վերջը յամառ ամերիկացին վճռեց վերջին առաջարկութիւն անել նրան. «Տուէք ինձ այդ թուղթը, ասաց նա փեսային, և առէք իմ աղջիկս ձեզ կին 150,000 դոլլար օժիտով»։ Առևտուրը կայացաւ։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

---

§ 40. Խորհուրդն ունի կնիք իւր յատուկ անուանակոչութեամբ և յանձնում է տեղական վարչութիւններին և մասնաժողովներին կնիքների ձևեր և մատեանների օրինակներ՝ դրամական վճարները և նիւթական նուէրները գրելու համար։

§ 41. Իւրաքանչիւր տարի տեղական վարչութիւններից և մասնաժողովներից նախընթաց տարուայ հաշիւները ստանալուց յետոյ՝ Խորհուրդը կազմում է ընդհանուր հաշիւ Ընկերութեան բոլոր գործերի աշխատութեան, գումարների մտից և ելից և կայքերի դրութեան մասին, և այս հաշիւը առաջարկում է ընդհանուր ժողովի վերաքննութեանը ց15ն Մայիսի (§ 44)։

—

Ընդհանուր ժողովներ։

§ 42. Ընդհանուր ժողովն ունի իւր նախագահը և քարտուղարը, որոնք իւրաքանչիւր տարի ընտրւում են նոյն իսկ ժողովից։

§ 43. Ընդհանուր ժողովները հրաւիրւում են Տփխիսում տեղական լրագիրների միջոցաւ, տարէնը երկու անգամ՝ Մայիսի 16-ին հաշւի, և Դեկտեմբերի 15-ին նախահաշուի քննութեան համար։ Բացի սորանից Խորհուրդը հրաւիրում է արտաքոյ կարգի ժողովներ ամենայն ժամանակ, երբ նա անհրաժեշտ կը համարէ այդ կամ երբ Խորհուրդը կ'ստանայ յայտարարութիւն ոչ պակաս քան Տփխիսի անդամների թւի մէկ երեսներորդից ստորագրուած, իւրաքանչիւր անգամ կանխապէս հրատարակելով պարապմունքների առարկաները։

Ընդհանուր ժողովը կայացած է համարւում, երբ նորա մէջ ներկայ են գտնւում ոչ պակաս քան նոյն անդամների թւի մի քսաներորդական մասը, հակառակ դէպքում չը կայացած ժողովից ութ օր յետոյ հրաւիրվում է երկրորդ ժողով, որի համար այլևս չէ պահանջւում անդամների որ և է սահմանեալ թիւ։ Վերջին ժողովի քննութեանը ենթարկւում են միայն այն գործերն ու հարցերը, որոնք մտած էին առաջին չը կայացած ժողովի պարապմունքների ծրագրի մէջ։

§ 44. Ընդհանուր ժողովի պարապմունքներին ենթարկվում են՝

ա) Խորհրդի ընդհանուր հաշուի քննութիւնը։ Այս դէպքում Խորհրդի գումարների մտից և ելից և առհասարակ նորա հսկողութեան ներքոյ գտնուող դրամագլուխների ստուգութեան համար ընտրւում է ժողովի միջից վերստուգող յանձնաժողով՝ բաղկացած ոչ պակաս քան երեք անձինքներից, որոնք Խորհրդի անդամ չը պիտի լինին և որոնց տրւում են այդ առարկաների մասին հարկաւոր եղած հրահանգները։

բ) Տեղական վարչութիւնների և մասնաժողովների համար Խորհրդից կազմուած հրահանգների քննութիւնը և հաստատութիւնը։

գ) Խորհրդի, տեղական վարչութիւնների և մասնաժողովների նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը։

դ) Լուծումն զանազան հարցերի, որոնք առաջարկւում են կամ Խորհրդից կամ տեղական վարչութիւններից Խորհրդի միջնորդութեամբ։

ե) Պատուաւոր անդամութեան կոչումն յանձնելը։

զ) Խորհրդի անդամների ընտրութիւնը։

է) Անշարժ կայքեր գնելուն և օտարացուցանելուն վերաբերեալ յառաջադրութիւնների հաստատութիւնը։

ը) Կանոնադրութեան փոփոխութիւնը։

թ) Ընկերութեան խափանումն,

Ընդհանուր ժողովին որ և իցէ առաջարկութիւն ներկայացնել ցանկացող անդամները պարտաւոր են այդ առաջարկութիւնը ենթարկել Խորհրդին կանխապէս վերաքննելու՝ ընդհանուր ժողովի նիստից առ նուազն ութ օր առաջ։

§ 45. Ընդհանուր ժողովի մէջ բոլոր գործերը վճռւում են ձայների առաւելութեամբ, իսկ երբ նոքա հաւասար են, նախագահի ձայնը առաւելութիւն է տալիս, բացառութեամբ այն հարցերի, որոնք վերաբերում են Խորհրդի անդամների ընտրութեան և կանոնադրութեան փոփոխման. սոքա վճռվում են ձայների երկու երրորդականի առաւելութեամբ։

Ընկերութեան խափանման հարցի վերաբերմամբ անհրաժեշտ է Ընկերութեան բոլոր անդամների երկու երրորդականի վճիռը։ Այս վերջին դէպքումը Խորհուրդը թէ լրագրութեան միջոցով և թէ պաշտօնական յայտարարութիւններով կանխապէս ազդարարում է տեղական վարչութիւններին, որպէս զի նոքա իւրեանց ընդհանուր ժողովների վճիռներն ուղարկեն Խորհրդին, որոշելով Ընկերութեան խափանումն ցանկացողների թիւը։

§ 46. Խորհրդի ընդհանուր հաշիւը՝ վերստուգող յանձնաժողովի զեկուցման հետ, ընդհանուր ժողովի վերահայեցողութիւնից և հաստատութիւնից յետոյ, հրատարակվում է տեղական հայ լրագիրներում։

—

Տեղական վարչութիւններ և Մասնաժողովներ.

§ 47. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները, որոնց կազմում է Խորհուրդը համաձայն 16-դ, 17-դ և §§-ների, վարում են Ընկերութեան բոլոր գործերը իւրեանց վիճակի սահմանների մէջ։

Ծանօթ. Վիճակի սահմանները որոշում է Խորհուրդը։

§ 48. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները՝ վարչական կազմակերպութեան, գործավարութեան եղանակի, նախահաշիւ և հաշիւներ կազմելու, հաշուեպահութեան, ընդհանուր ժողովներ կայացնելու պարապմունքների շրջանը և նոցա նիւթերը որոշելու վերաբերութեամբ, գործում են Խորհրդից տուած առանձին հրահանգի ճիշդ հիման վերայ (§ 38 և բ. բաժանումն 44-դ §-ի)։

§ 49. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները իւրեանց կարգադրութեան ներքոյ գտնուող գումարներից հարկաւոր մասը թողնում են ընթացիկ ծախքերի համար, նախահաշուի որոշման համաձայն, իսկ մնացորդը առանց յետաձգութեան ուղարկում են Խորհրդին։

—

Ընկերութեան խափանումն.

§ 50. Եթէ որ և է պատճառով Ընկերութիւնը դադարեցնէ իւր գոյութիւնը, Ընկերութեան բոլոր մնացած դրամագլուխն ու կայքը գործ են դրվում ազգօգուտ գործերի համար, Ընկերութեան բոլոր անդամների երկու երրորդականի վճռին համաձայն (§ 45)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՆԱԿԱՐԱՆ ԵՕԹԸ ՍԵՆԵԱԿՆԵՐԻՑ բաղկացած իր ամեն յարմարութիւններով Յ. ՇԱՀԻՆԵԱՆՑԻ տանը № 27, վերին յարկում, Օրբէլեանովսկի փողոցի վերայ հեռագրական կայարանի հանդէպ, **ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՒ**:

ԴԱՍԵՐ ՋՈՒԹԱԿԻ (СКРИПКА) ՎԵՐԱՅ

Երևելի երաժիշտ Ապօլինարկօնտսկու աշակերտ **Ս. ՁԻԺԵԱՆԸ** դասեր է տալիս **ՋՈՒԹԱԿԻ** վերայ: Ցանկացողները կարող են դիմել նրա մօտ կամ ինքը կ'այցելէ նրանց: Հասցէն. Դվորցօվյի փողոց Սարաջեւի տուն սենեակ № 12, Дворцовая улица, домъ Сараджева.

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՋՈՐԱԲԱՇՈՒ Ս. ԳԷՈՐԳ եկեղեցու ծխական դպրոցը սեպտեմբերի 1-ից բացուեցաւ. ընդունվում են 7—10 տարեկան մանուկներ: Դպրոցը այժմ տեղափոխուած է Բէգլեարօվսկի փողոցի վերայ պ. Բաղրամեանի (այժմ Լաչինեանի) տանը № 15.

Գրիգոր Մատինեանց.

3—10

Արդէն մամուլի տակ է և սեպտեմբեր ամսի վերջերը լոյս կը տեսնէ:

ՉԷՍՏԷՐՏՕՆԻ ԺԱՌԱՆԳԸ

պատկերազարդ վէպի հայ թարգմանութիւնը. ուստի խնդրում եմ այն պարոններին, որոց մօտ գտնվում են այդ գրքի բաժանորդաթերթերը, մինչև սեպտեմբերի 20-ը բարեհաճեն վերադարձնել ինձ թերթերը:

Գիւտ քահանայ Աղանեանց.

3—10

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ ունէ ներս. դպրոցի 7-րդ մասնագիտական դասատուն մրցանակ (դիպլօմ), որոնում է հայ ընտանիքներում **ԴԱՍԵՐ** և պատրաստում է աշակերտներ և աշակերտուհիք **ՆԵՐՍԻՍԵԱՆ, ԳԱՅԻԱՆԵԱՆ** և **ՅՈՎՆԱՆԵԱՆ** միջնակարգ ուսումնարանների I, II և III դասատանց համար: Հասցէն հարցնել «Մեղուի» խմբագրատանը:

1—10

Յառաջիկայ ուսումնական տարուայ համար **ԵՐԵՒԱՆԱՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻՆ** հարկաւոր են **ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ** Հայոց, Գաղղիերէն լեզուների, գծագրութեան, տոմարակալութեան, Ռուսաց վայելչագրութեան, Ռուսաց պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան համար. և մի ուսուցիչ տղայոց ծխական դպրոցի: Ամեն մի ուսուցիչ պարտաւոր է ունենալ շաբաթական 24 դաս: Ցանկացողները թող բարեհաճին իւրեանց պայմանները և ուսման վկայականները առաջարկել նոյն դպրանոցի վարչութեան:

Անդամ Հոգաբարձութեան

Վարդան Եղիազարեանց

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ» անցեալ տարուայ անդամները և ցանկացողները անդամ դառնալու կարող են դիմել ընկերութեան գանձապահ պ. Մովսէս Թուրաբեանին, Թիֆլիսի առևտրական բանկա անդամակցական վճարը հատուցանելու և տոմսակ ստանալու:

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի իմ թարգմանած՝ **«ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՑ ՎԵՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ»**, հեղ. Ժ. Բամբրօսօնի: Ուստի դիմելով այն յարգելի բարեկամացս, որոնք բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, խոնարհաբար խնդրում եմ, որ մինչև օգոստոսի վերջը բարեհաճին յանձնել ինձ բաժանորդաթերթը, որպէս զի կարողանամ աւարտել գրքիս տպագրութիւնը առաջիկայ սեպտեմբերին:

Իմ հասցէն. Тифлисъ. Григорію Шахбудахянцу, учителю Армянской Нерсесянъ Семинаріи.

Գրիգոր Շահբուդաղեանց:

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնը, **«ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ»**. ծխական դպրոցների 4-րդ տարուայ դասընթացք և միանգամայն 1-ն, 2-դ, և 3-դ տարիների համար հրահանգ:

Զաքարիա Գրիգորեանցի **«ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ»** հրատարակութեամբ լոյս են տեսած հետևեալ դասական և ընթերցանելի գրքերը՝

	ռուբլի	կոպէկ
1) Սիմէօնեանց Մ.—«Ժողովածու» Թուաբանական խնդիրների մ. ա. (ամբողջ թուեր)	»	50
2) — Նոյնը մասն երկրորդ (կոտորակներ)	»	50
3) — Դասագիրք Թուաբանութեան	»	60
4) Ղուկասեանց—«Դասագիրք ընթերցանութեան»	»	40
5) — «Դասագիրք ընդհանուր պատմութեան» հին դարը	»	80
6) Սիմէօնեանց Պ.—«Սրբազան պատմութ.» Հին-կտակարանի հ. ա.	»	60
7) — — — Նոր-կտակարանի հ. բ.	»	60
8) Տէր-Յակովբեանց—«Դասագիրք ռուսաց լեզուի».	»	60
9) — «Ընթերցարան» մասն առաջին	»	25
10) — «Աղօթատետր	»	7
11) Զ. Գրիգորեանց—«Մարդակազմութիւն»	»	50
12) Սիմէօնեանց Ն.—«Ընդհանուր աշխարհագրութիւն» հ. ա.	»	—
նախագիտելիք 5 պատկերով	»	35
13) — — հ. բ. մասն ուսումնական և բնական 31 պատկերով	»	—
	»	60
14) — — հ. գ. մասն քաղաքական	»	60
15) Բահաթրեան—«Քերականութիւն աշխարհիկ լեզուի»	»	25
16) Երզնկեանց—«Մանկական երգարան»	»	20
17) — — «Ձայնագրեալ մանկական երգարան»	»	40
18) Գամառ-Քաթիպա—«Մանկական ոտանաւորներ և երգեր	»	20
19) Միրիմանեան—«Ժողովածու» (թուեր)	»	12
20) Կօնդրատենկօի գծագրութեան օրինակներ	»	40
21) «Քերական» կամ «Այբբենարան» հին ոճով	»	10
22) «Տողացանցներ» չորս ծալ թերթը	»	5
23) «Շարժական տառեր» թերթը	»	5
24) Ծերենցի «Երկունք Թ. դարու»	1	»
25) — «Թէոդորոս Ռշտունի»	1	»
26) — «Թորոս Լևոնի» (երկրորդ տպագրութիւն)	1	»
27) «Թագւորեան—փորձ Լեզուաբանական հետազօտութիւն»	»	50
28) Նազարեանց «Պօլսիմպէրեալ» մանկական թատրոն	»	20
29) Աքիմեանց «Նալայ և Դամայեանտի	»	20
30) Ա. Մ. Ե. Պ.—Դիւցազունք Հայկ, Արամ և Վահագն	»	30

ՈՒՐԻՇԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

	ռուբլի	կոպէկ
31) Մանդինեանց—«Ազգային ընտանեկան աշխարհ»	»	25
32) — «Դիւցազնական աշխարհ»	»	30
33) — «Նահապետական աշխարհ»	»	65
34) Երզնկեանց—«Դասագիրք ձայնագրութեան	»	30
35) Տէր-Աբրահամեանց—«Հայոց պատմութիւն» 24 պատկերով	1	»
36) «Տնային բժշկական մարմնամարզութիւն»	»	40

Վերոյիշեալ գրքերը տասնից աւելի առնողներին 20% զեղչումն կը լինի գինը կանխիկ վճարողին.

ԵՂԲԱՐՑ Կ. ԵՒ Ս. ՊՕՊՈՎՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՆԻՑ

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ.

Գրասենեակը Կուզնեցկի կամրջի վերայ, Կ. Ս. Պօպովի տանը:

Պատիւ ունինք յայտնելու հասարակաց գիտութեան, որ մեր Ֆիրմայի **ԹԷՅԻ** առևտրի համար բաց արինք նորերում նոր խանութներ և հետևեալ քաղաքներում:

ԽԱՐԿՈՎՈՒՄ—Պետրովսկի փողոցի վերայ, սեպհական տան:

ԹԻՖԼԻԶՈՒՄ—Գօլօվինսկի պրօսպէկտի վերայ, Միրիմանեանի տան:

ՍԷՎԱՍՏՕՊՕԼՈՒՄ—Բօլշօյ-Մօրսկոյ փողոցի վերայ, Կօզէնփանտակի տանը:

Ինչպէս այս, նոյնպէս և առաջուայ խանութները - **Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ** և **ԿԻԷՎՈՒՄ**—թէյն, որ կշռած է ֆունտերի, կէս ֆունտերի և քառորդ ֆունտերի, ուղարկվում է մեր գլխաւոր պահեստի խանութից, որ գտնվում է Մոսկվայում, Կրասնօսելսկի փողոցի վերայ, սեպհական տան:

14—30

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

Ֆիզիքական, ժողովրդագրական և քաղաքական

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ձեռնարկ—հայ տղայոց և օրիորդաց ուսումնարանների համար. աշխատասիրութիւն Աւետիքի Տէր-Յակովբեանց, գինն է 60 կօպէկ:

Ցանկացողք ստանալ պէտք է դիմեն Тифлисъ. «Центральная книжная торговля» կամ աշխատասիրողին Ներսիսեան ուսումնարանում:

*) Ծանօթ. Հայաստանի քարտէզի առաջի տպագրութիւնը անյաջող անցաւ. ձեռնարկեցի երկրորդ տպագրութեան և մինչև մի քանի օրը պատրաստ կը լինի:

Աւետիք Տէր-Յակովբեանց:

Շատ երկար տարիներ պարապելով գործնականապէս տնտեսականութեան վերաբերեալ գործերով, ես պատրաստեցի **ՎԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԳՐՔԵՐ**: Սրանցից—

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ, որ քաղցրեղէններ (մուրաբա) շինելու մասին էր, լոյս տեսաւ 1861 թւին, որ և իւր ժամանակին ընդունելութիւն գտաւ:

Այժմ արդէն բոլորովին պատրաստ ունենալով միւս հինգ հատորները՝ ես դիտաւորութիւն ունեմ հետզհետէ հրատարակել: Սրանցից իւրաքանչիւրի բովանդակութիւնը մենք յայտնել ենք առաջին հատորի մէջ, որ և աւելորդ չենք համարում յիշել այստեղ:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ—զանազան տեսակ օշարակներ և լիկօրներ (կըսի) շինելու վերայ:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ—զանազան տեսակ շաքարեղէնների և զանազան քաղցրեղէն ուտելեղէնների վերայ զանազան երկրների սովորութեանց համաձայն:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ—Հայաստանի և Թուրքաստանի բազմատեսակ խմորեղէնների և կերակուրների վերայ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ—Եւրոպական կերակրեղէնների և խմորեղէնների վերայ, և

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ—հարկաւոր գիտելիքներ տնտեսականութեան վերայ:

Եթէ տեսնենք, որ ընդունելութիւն ունենում են մեր գրքերը, մենք կը ձեռնարկենք և **ՊԱՍՈՒՑ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԻ** մասին գրել, որոնք թէ տեսքով, թէ համով ամենևին չեն զանազանվիլ մսայ կերակուրներից, ինչպէս օրինակ անիկ և խաշած ձու, ապուխտ, ձկնաձու, մածուն, և այլն:

Մենք այսպիսի կարճառօտ վերնագրերի մէջ ամփոփեցինք բոլոր հատորների բովանդակութիւնը: Մենք աւելի յարմար դատեցինք ներկայ հանգամանքների համեմատ թողնել Բ. հատորը և հրատարակել Գ. և Դ. հատորները միասին, կամենալով մանաւանդ ծանօթացնել Հայաստանի ընտիր կերակուրների հետ, որ շատերին անյայտ է:

Գ. ՀԱՏՈՐԸ բովանդակում է 296 տեսակ քաղցրեղէններ, իսկ Դ. ՀԱՏՈՐԸ 869 տեսակ կերակուրներ, որ ընդամենը 1165 տեսակ կ'անի:

Տպագրութեան համար մենք ստորագրութիւն բաց արինք.

ԹԻՖԼԻԶՈՒՄ—պ. Զ. Գրիգորեանի «Կովկասեան գրավաճառանոցում» և պ. Նիկօղայոս Բողարջեանի ծխախոտի խանութում:

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ—Հայոց եկեղեցու արժ. Յակոբ աւագ քահանայ Սուքիասեանցի մօտ:

Կ. ՊՕԼՍՈՒՄ—իշխ. Բէհբուդեանի և Ցատեանների հաւատարմատար Եանքօ Կօստիի մօտ (Մախր գիւղ):

Ստորագրվողների համար երկու հատորների գինն է **ԵՐԵՔ** (3 ռ.) **ՌՈՒԲԼԻ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼՈՎ**, իսկ տպագրութիւնից յետոյ **ՎԵՑ** (6 ռ.) **ՌՈՒԲԼԻ**:

Մենք անմիջապէս տպագրութեան կը յանձնենք Գ. և Դ. հատորները, երբ ստորագրվողների թիւը 240-ի կը հասնի:

Յ. Մամիկոնեան.

ԱՐԴԷՆ ԾԱԽՎՈՒՄ Է

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ»

Անունով մեր **ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ** դասագիրքը Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում: գինն է 60 կոպէկ:

Գումարով առնողներին զեղչումն կը լինի: Իսկ ով ցանկանում է հատը 55 կոպէկով ձեռք բերել, գինը **ԿԱՆԽԻԿ** վճարելով՝ թող դիմէ մեզ հետևեալ հասցէով.

«Въ Тифлисъ.— На Авлабарѣ, Ивану Петровичу Назарьянцъ.

Յ. Նազարեանց.

12—25

Դուրս եկաւ մամուլի տակից **«ՄՈՒՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ»** ազգային լիակատար երգարանի Առաջին հատորը երկրորդ տպագրութեամբ, փոփոխած, որի մէջ գտնվում են բացի այն բոլոր երգերից, որոնք յայտնի են ժողովրդին, նոյնպէս նոր երգեր, հատընտիր բանաստեղծութիւններ և արձակ գրուածներ: Վաճառվում է. Թիֆլիս «Կենտրոնական» և «Կովկասեան» գրավաճառանոցներում, Երևան՝ պ. Արգար Գուլամիրեանցի խանութում, Բագու՝ պ. պ. Գրիգոր Դիլդարեանցի և Ս. Տէր-Օհանեանցի խանութներում: Օտարաքաղաքացիները կարող են ստանալ Բագու նոյնպէս «ՄՈՒՍԱՅԻ» խմբագիր-հրատարակչին այս հասցէով. Аваку Лазаревичу Григоріянцу, въ Баку. Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռուբլի:

Աւագ Գրիգորեանց.

ՉԵՆ ՀԱՍՑՐԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

10 սեպտեմբերի

Բարխուդովին, Շիլովին, Գավրիլ Պապալովին, իշխ. Լևան Թումանովին, Նենօ Շարումովին, Գրիգորովին, Աւալեանցին, Գէորգ Վարդանովին, աշակերտ Ջաշիովին:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 11-го Сентября 1881 г. Типографія М. Ротинянцъ и К. Տուն բժշկապետ Մ. Ռոտինեանց.